

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 ֆր.

Վեցամսեայ . . . 6 «

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւ միկ ծարով

Տարեկան . . . 14 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.


ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60

Վեցամսեայ 1.50Տօլար «

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուցման արդր
20 սանիթի



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ն Ք Յ Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՆՆ ՉԱՐԵՔ ՇԱՐԱԹ ԵՆ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Ց Է

Rédaction du journal

„I. vounk“

VARNA (Bulgarie)

Редакция

НАВѢСТНИКЪ

Иравуни

ВАРНА

Գրութուններ եւ չեկ
տրութիւն

ԳՈՐԾԸ

Մեր նախորդ յօդուածով բա-
ցատրած էինք թէ քաղաքա-
կրթութեան էական պայմանն է
զգացումի աշխուստութիւնը։ Հոս պի-
տի ցոյց տանք թէ անհատնե-
րու աշխուստը զգացումը եթէ մի-
այն զգացում մնայ առանց խոր-
հաւրդի եւ Գործի, ամուլ, ան-
պտուղ ծառի մը կը նմանի որ
միայն իր բունը հովանաւորելէ
զատ ոչ մէկ օգտակարութիւն չու-
նենար։

Անհատ մը ինք իր մէջ ու-
նենայ վերջին ծայր աշխուս-
տութիւնը, այսինքն ճանչնայ ու
յարգէ ուրիշներու իրաւունքնե-
րը, մէկու մը դէմ չարութիւն չը
խորհի, անոր յառաջդիմութեան
արգելք չըլլայ, չը չարախօսէ
եւ այլն։ Բայց այս ամէնը աղ-
նիւ զգացումի ներքին կորիզն
է միայն, որով եթէ հանրութեան
միաս մը առաջ չը գար, օգուտ
ալ չարտադրուիր։ Այլ կը նմանի
քարայրի մը մէջ պահուած գան-
ձի մը, որ եթէ դարբնով ալ
մնայ հոն, իրմէ հինգ քայլ տն-
դին նօթութենէ տառապող ըն-
տանիքի մը պատառ մը հաց
չի տար։

Կը տեսնենք շատ անգամ աղ-
նիւ զգացում կրող անհատներ,
որոնք անմեղութեան մարմնա-
ցումներ են, ոչ ոքի միաս մը
չեն հասցներ, բայց մէկու մը
օգուտ ալ չունին։ անմեղներ են
այո՛ր, բայց լոկ անմեղութիւնը
ոչ մէկ յառաջդիմութիւն չը խո-
տանար։ Յառաջդիմութիւն, քաղա-
քակրթութեան համար անմեղու-
թիւնը բաւական չէ, Բարութիւն
հարկաւոր է, եւ Բարութիւնը ըզ-
գացումի աշխուստեան հետ
Խորհուրդին եւ Գործին միացումն
է։ Աղնիւ զգացումը բարին կը
ճանչցնէ անհատին։ Խորհուրդը
այդ բարիին հասնելու միջոցնե-
րը կը նորէ։ Իսկ Գործը այդ մի-
ջոցներու կիրառութիւնն է, որով
միայն կարգաւորութիւն զգացումի
աշխուստութիւնը, որ կը կոչուի

Բարութիւն։ Ահա թէ ո՛րչափ կը
տարբերին իրարմէ Անմեղու-
թիւնը ու Բարութիւնը։

Քաղաքակրթութեան տարրա-
կան սահմաններուն մէջ դեզե-
րող մեզ նման ազգեր անմեղ-
ներու պէտք չունին, այլ բա-
րիներու կամ Բարեգործներու։

Աղքատ մը կերակրել, որը մը
խնամել բարութիւններ են ան-
հատական սահմանին մէջ։ Բայց
երբ հարկը կը ներկայանայ հա-
մայնքի մը, ազգի մը անհրա-
ժեշտ պիտոյքը հոգալու, որ քա-
նի մը անհատներու ձեռնհա-
սութենէն վեր զոհողութիւննե-
րու կը կարօտի, այդ պարագային
բարեգործներու խմբակցութիւն
մը հարկ կ'ըլլայ հաշվապետի
համար մեծ պիտոյքը։ Այս պա-
րագաներու տակ կը կազմուին
բարեգործական ընկերութիւն-
ներ եւ յանձնախումբեր (Գումիթէ)։
Այս կերպով կազմուած ընկե-
րութիւնները կամ խմբակցու-
թիւններն են որ աշխարհի ա-
մէն կողմը, քաղաքակրթութեան
ճամբուն մէջ, մեծ յառաջդիմու-
թիւններ առաջ բերած են, ամ-
բողջ երկիրներ քաղաքակրթած,
ազգեր ապառաժ բռնակալներու
ձեռքէ վերջապէս խմբակցական
բարեգործութեան արդիւնքը
երբեք չը բաղդատուիր անհա-
տական բարեգործութեան ար-
դիւնքին հետ։ առաջինին առա-
ւելութիւնը անհամեմատելի է։
Հետեւապէս երբ ամբողջ ժողո-
վուրդի մը բարօրութիւնը ձեռք
բերելու ծանր անհրաժեշտու-
թիւնը կը ցցուի աղնիւ զգա-
ցումներով տոգորուող անհատ-
ներու առջեւ, որոնք ի-
րենց այդ զգացումին միացնել
կը սիրեն Գործը եւ որոնք ան-
հատական բարեգործութիւններէ
չեն թերացած, երբեք վարանե-
լու չեն խմբակցական գործու-
նեութեանց մէջ իրենց պատշաճ
տեղը գտնելու։ Քաղաքակրթու-
թիւնը միշտ այս պայմանի տակ
կը կատարուի։ Բարեգործութիւն
մը երկնցած մուրացիկի մը
ձեռքը անդին հորդը շատ ան-

գամ ծանօթ բարեգործ մըն է,
որ քանի մը բարեգործական ըն-
կերութիւններու աւսական հա-
րիւրներ կը վճարէ սիրով, բայց
մուրացիկինն ի սահման չը տար,
որովհետեւ լու ըմբռնած է որ
խմբակցական բարեգործութիւն-
ները աւելի նպատակաւորմար
են, մինչդեռ մասնակի նպաստ-
ները շատ անգամ իրենց նպա-
տակէն կը վրիպին։

Մեզ նման նիւթակտն առա-
ւելութիւններով չը փայլող ազ-
գի մը աղնիւ զգացումով տոգոր-
ուող անհատներուն համար ալ
բարեգործութեան օրինակելի ե-
ղանակը այդ է։ Երբ մանաւանդ
խնդիր կը ներկայանայ ազգային
ապստութեան գործին նպաստելու
— մեծագոյն բարեգործութիւնը,
այլ եւ երբեք ներքին չէ ձեռն-
պահ մնալ այլեւայլ առարկու-
թիւններով։ Հոս պէտք է ամէն
անհատ իր նիւթական եւ բարո-
յական զոհարարութիւնները տա-
նի կցէ Սուրբ Գործին որուն
յաջողութիւնը միայն համայնա-
կան ջանքերով կարելի է ապա-
հովել, եւ անով միայն մենք պի-
տի հասնինք քաղաքակրթու-
թեան այն բարձրագոյն աստի-
ճանին որ ամբողջ մարդկութեան
խտեալը կը կազմէ։

ՀԱՅԿԱԿԱՆ

(Պուրկ · Հեռգ · գործ ·)

Կ · Պօլիս 10 օգոստոս

Բաղէշի վալիին մէկ հեռագի-
րը կիւմացնէ թէ նոր հայ խումբ
երեւելներ են Մանազկեր-
տի գաւառին մէջ (Երզրումի
նահանգ ·) նոյնպէս եւ Բաղէշի
սանճագին մէջ։

Չեւք առնուած են խիտ մի-
ջոցներ չարագործութիւնները
արգելելու եւ խումբերը բռնելու
համար։

Էնտքանսան Պիթի Պոլսոյ թղ-
թակիցը հետեւեալը կը գրէ։

«Բաղէշի վալին կառավարու-
թեան զրկած է բազմաթիւ թղ-
թեր եւ յայտարարութիւններ

ստորագրուած Հայերէ եւ ապա-
ցուցանող յեղափոխական կազ-
մակերպութիւն մը թէ Սասուն-
ցիք հնազանդելով վահանին
մերժած են Առաքել վարդապե-
տի առաջարկութիւնները, որոնց
համեմատ անոնց կատարեալ նե-
րում պիտի շնորհուէր եթէ հը-
պատակէին, եւ վերջապէս, թէ
հայ զիւղերու այրուիլը հրա-
մայուած էր, թիւրք զօրաց մօ-
տենալու պարագային վահանին,
Հրայրին եւ համախոհներուն կող-
մէ, որպէսզի վերագրուի թէ
այդ ստացուածներու աւերումը
զօրքերու եւ Գիւրտերու գործն
է։ վահանին զրկուած նամա-
կի մը մէջ Հրայր փամփուշտ
կուղէ որովհետեւ կըսէ, «չար-
ժումը պէտք է սկսել», եւ հոն
երկարօրէն կը խօսի ապստամ-
բութիւնը շարունակելու համար
ձեռք առնուելիք միջոցներու
մասին, աւելցնելով որ անհրա-
ժեշտ է այլեւ այլինչ գիւղերը
(յիշուած ծածկ անուններով) երբ
զօրքերը մօտենան որոնց պէտք
է դիմագրել։ Բաղէշի Առաջնոր-
դը, Մուշի պատր · փոխանորդը
եւ այդ երկու քաղաքներու
վարչական ժողովներու անդամնե-
րը կը յայտարարեն թէ իրենց
ճինիկ գիւղը գտնուած ատենին
ուր կը սպասէին Առաքել վ · ի
խաղաղեցուցիչ պաշտօնի ար-
դիւնքին, չարունակ Հայերը,
հպատակութիւն պայմանագրելէ
հետեւ, կը շարունակէին Սասու-
նի բարձունքներուն վրայ պատ-
նէշներ կանգնել եւ հոնկէ
զօրքերու հետ ընդհանրութեան
սկսածէին։ Ուրիշ թուղթի մը
մէջ Բաղէշի առաջնորդին փո-
խանորդ վարդան վարդապետը
եւ Չանլը վանքին վանահայրը
կը հաստատեն թէ կէլիկիւզանի
բարձունքը քաջուած իրենց հայ
րենակիցները զօրաց վրայ կը-
րտկ ըրին եւ այլն եւ այլն։

Ապստամբապետերու նամակները
բռնուած են այս գիւղէն եւ Սէ-
մալէն։ Այդ բոլոր վաւերաթուղ-
թերը հայերէնէ եւ թուրքերէնէ
թարգմանուած տպագրուեցան
եւ ցրուեցան գեւազաններուն եւ

լրագրաց թղթակիցներուն : Ատի
անտարակոյս որոշ աղբիւցութիւն
մը պիտի ընէ ամէն անոնց վրայ
որոնք կուգին Սասնոյ նոր
տրամին մասին գաղափար մը
կազմել և պատմութեան առջեւ
այդ մասին պատասխանատու
թիւնները ճշտել :

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ

«Ատենով, հին բարի ժամանակ-
ներուն մէջ, գիրք կը կարդացուէր,
իսկ այսօր թերթ կը կարդան » :

Ֆրանսացի օրագրողի մը խօսքն է
ասիկա, որուն ճշմարտութիւնը ա-
պացուցանելու համար թուանշանա-
կան գործողութիւններու չինք կարո-
տիք : Եթէ, արդարեւ, ի սփիւռս
աշխարհի ամեն օր մամուլին տակէն
եւած թուղթի բուրգերը հաշիւի առ-
նել ուզենք, հիստօքանչ աչքով պիտի
տեսնենք թէ՛ աշխարհի լայնածաւալ
մակերեսով ձիւնաթափում տաւանով
մը ծածկուած պիտի ըլլայ, այնքան
մեծ, այնքան լուսնակարկուտ, այն-
քան աներեւակայիլի է անոր թիւը,
բաղդատմամբ լոյս տեսած գիրքերու
քանակութեան :

Մամուլը, ինչ սօժ է ան, հովին
պէս արագընթաց, լայնի պէս թափան-
ցիկ, ճառագայթի պէս շողողուն,
աւելի պէս ստակալիթ խար : Մամու-
լը ինչ բարեքնիք ըրած չունի, որ-
քան ալ չարքնիք հասուցած՝ խեղճ
մարդկութեան գլխուն : Ակնթարթի
մէջ լեռներ կը կանգնեն, երբ ուզէ,
անհրաժեշտ մէջ ամբողջութեամբ
հիմնադրուած ընկու համար՝ եթէ չու-
զէ :

Կաղաքակրթեալ աշխարհին մէջ,
ինք է հանրային կարծիքն ուղեցոյ-
ցը, եւ եթէ ինք չէ եղած գեռ աշ-
խարհի վրայ կամ Միջագետք, պատ-
ճառը այն է որ, մարդկային մէկը ը-
նական օրէնքով, բարեքնիքով միշտ
գտնուած պիտի ըլլայ վատը, Արեւելի
դէմ կայէնք, Վարդանիսի դէմ՝ Վասակը,
այսպէս ալ առաջգրեմաբար, արդարա-
դատ եւ ուղղամիտ լրագրութեան քով
պիտի գտնուի յետադիմասէրը, քնն-
ողը, կաշառուածը, որ քանակաբար
պիտի կասեցնէ արդարին ձայնը :
Իայց ինչ որ ըլլա, գեանաբար լրագ-
րութեան մը ստոր գերը՝ յաղթանակը՝
ուշ կամ կանուխ՝ դարձեալ առաջըն-
մասնին ու ազատարարին պիտի ըլ-
լայ : Սուրբ է ու երկնային, անոր
պաշտօնը : Աշխարհի բռնակալները,
տառապող ժողովուրդներու արեւը
խաղ գիշակիւր գաղանները պէտք է որ
ղողան անոր ձայնին ի լուր, որովհե-
տեւ անով՝ ուշ կամ կանուխ՝ պիտի
ջարդու բշուր ըլլայ ինչ որ բռնաւոր
է ու հարստահարող աշխարհի վրայ,
մինչեւ որ աշխարհի մէջ արդարութիւ-
նը աղատութիւնը, հաւասարութիւ-
նը կազմին մարդկութիւնը զեկավարող
պաշտելի երբեք ներկայութիւնը :

Եւ երբ առաջգրեմաբար լրագրութեան
բարեքնիքը արձանագրել կը փորձենք՝
պէտք է հպարտանալ, որ հայերս,
արդէն եւրոպական քաղաքակրթու-
թիւնը կապիւրէն ընդօրինակելու խիստ
ընդունակ, լրագրական աշխարհին մէջ
Եւրոպացիներուն հաւասարելու չափ
առաջ գնացած ենք, զանոնք՝ բաղ-
դատմամբ մեր ընթերցողներու որակին
ու քանակին՝ գերազանցելու ալ աս-
տիճան, մեր ստրկական անկախուն,
հալածական հալածական այս վիճակին

մէջ իսկ : Ա՛լ երեւակայեցէ՛ք թէ ին-
չե՛ր չպիտի կրնանք ընել, եթէ Աստու-
նած մի՛ արտոյտ օր մը ազատ Հայաս-
տան մը ունենալու գերագոյն երանու-
թիւնը վայելենք :

Ասոր իբր պաշտօնի թողունք ար-
տասնամանի միւս հաղորդները, ո-
րոնք այս տեսակէտով ոչինչով պակաս
թողուցին, ու օրինակ անոնք սա
Եղիպտոսայեցի, զորոնք « յետագէմ
թմբած » անուանելու չափ անխիղճ
եղած ենք :

Կոտորածներու հետեւանքով նոր
գաղթականութեան հոսանքն առաջ
«Նեղոս մը», «Արմաւենի» մը միայն
տեսած ունէինք, որ հազիւ թէ արեւ-
տեսած՝ ցամաքեցան : Թօշնեցան, և
ա՛ռ՝ 1896 էն իվեր՝ ինչ տեղա-
տարափ թերթիւն ու թերթիկներու,
ընթերցողները ձառնարկելու, զգուե-
ցնելու աստիճան : Լրագրութիւնը որ
փափուկ արուեստ մըն էր, չարշա-
րահեալ դարձաւ, ստորնացաւ յա-
ճախ աղտոտութիւններու մէջ մինչեւ
կոկորդը թիմուած : Քիչ մնաց որ ար-
ագուն, խանութպանը, պախալը,
հայերէն քանի մը բառի քով քովի
բերել գիտողը անգամ փորձէր խմա-
գէր ըլլալ, մեր մեղքովը : Ըսէք կա-
ղանք, ինչով հիմա ենք յետադէմ, երբ
ունեցանք Փարոսը, (Երկրցոյ չիշեալ
վառ եղեալ, իւզապապ) Փիւնիկը,
(Երկրցոյ կիսամասկալ եւ օրաթերթ) Ար-
շաղոյս, Նոր-Օր, Լրագիր, Ար-
տեմք, Փաթակ, Ազատ Բեմ, Ժո-
ղովուրդ, Պարտեզ, Հայեր, Գրաւոր
եւ դեւ, ո՛վ յիմարութեանս, չեմ
գիտեր ինչ :

Փուլուլու մը չուշացաւ, սակայն. այս
թերթներուն մեծամասնութիւնը հե-
տադէմէն կենազրաւ եղաւ, վճարող
ընթերցողներէն աւելի թիւով գտնուած
ըլլալով, եւ իբր արեւոտափելի հե-
տեւանք աւազել վրայ հիմնուած խա-
խուս չէ՛ք բերու. ու խեղճ խմբագրա-
պետները կամաց կամաց հրաժեշտ
ստելին լրագրական ապագային ասպա-
րէզին, երբեմն բարոյապէս, երբեմն
նրեւապէս, փճացած, անանկացած,
կանոնի ժողովուրդներուն չեմ գիտեր
քանի՞ հաշիւ ձերմիցնելով :

Այս ամբողջին, հիմա, բարեբախտա-
բար թէ գործախտաբար, կը մնայ
«Ազատ-Բեմ»ը, որ իր կեանքը կը
պարտի իր ստ փոքրաթիւ՝ անձնուէր
երթասարդ խմբակի մը անհատական
զոհողութիւններուն. Արտեմքը, ո-
րուն համակրելի «Ալօն» կովկաս գա-
ցած է կնոթական օտկանին վա-
ռելանիւթ բերելու համար. հոգ չէ,
ընթերցողները պակաս թիւերը պիտի
առնեն, փոք ամբի վերջ (՝՝՝) : «Արշա-
ղոյս»ը, որուն խօսքը ընել ձեռնհա-
սութենէս շատ վեր է, գործախտաբար.
«Ժողովուրդ»ը, որուն խեղճ Պալեսնը
հիւընդցած է եզեր. առանց փոխ-խըմ-
բագիր մը ապահոված ըլլալու. Պար-
տեզը, որ օսկիինձոր պտուղներ կը
խոտտանայ, Ուղունեանի Տէր տա-
քուի արեւնիւր պարկեւէ՛ր իրեն. Լրա-
գիրը, գինկատիպ օրաթերթ, օսկան չու-
կայի ազատ մարդերուն :

Այս ամենը, կատակի մէկդի, շատ
լաւ, շատ գովելի. միայն թէ, ներե-
ցէք որ ըսեմ, այս ամբողջը՝ անձատ
անջատ հրատարակուած՝ մէկ հատիկ
կանոնաւոր թերթի մը արժէքը չունի,
ու աւելորդ բեռ մըն է խեղճ բաժա-
նողներուն ուսիբուն վրայ, քանի որ
գրեթէ միշտ միեւնոյն ընթերցողները
են այդ ամբողջութիւնը գէշ աղէկ
ապրեցողները, յաճախ իւրաքանչիւ համար
բաժանորդարութեւն չունի. եւ երբեմն սանկ
ողորմութիւն տուած ըլլալու պէս

քան մը : Թառաջդիմութիւնը, բարե-
կամեմբա, առատութեան մէջ չէ, եւ
խելացութիւնը այն է որ քիչ, լաւ
ու ամուր հիմքերու վրայ զրուած
քանիք ընենք, առանց լրագրութեան
վարկը ցածցնելու : Եգիպտոսի Անգ-
լիացիները, որ մենէ հարեւրապատիկ
առաւելութիւններ ունին, մէկ հատիկ
լրագիր մը ունին, «Էնթիւսթ» կազմի :
Մեղքը չէ՞ այդ զոհողութիւններուն.
այդ տքնութիւններուն, զորոնք
պարզ համաձայնութեամբ իր կարելի
է արդիւնաւորապէս գործածել, քիչով
այց լաւով առանց ուրիշներուն բեռ
ըլլալու : Մէկ հատիկ թերթ մը կը
բաւէ ամբողջ Եգիպտոսի համար :

Եթէ ուրեմն համաձայնութիւնը
հայուն խաղաղ նկարագրին մէջ մեծ
բարեմասնութիւնը եղած ըլլար, եթէ
ամերիկեան օրստէմով զինակցութիւն-
ներ կազմուէր ընդունակ մոզովուրդ
եղած ըլլայինք, եթէ ու եթէ...
պիտի առաջարկէի որ՝ այդ ամբողջ
թերթերը մէկանց ծովը թափուին, ու
մէկ հատիկ թերթ մը միայն մնար
չաբաթ հիմակուհի մա երեք անգամ
հրատարակուելու պայմանաւ, շահա-
բաժինով որոնց համար որ կուգին,
խմբագրապետութեամբ Միհրան Աս-
քանապի եւ Ալօ Մառի, քանի որ
«Ազատ բեմ» եւ «Ժողովուրդ»ը հացի
աղբիւրներ չեն իրենց համակրելի սե-
փականատէրներուն համար :

Կատարելապէս վստահ եղէք որ այս
կազմակերպութեամբ շատ գիւրդին պի-
տի ըլլայ ապրիլին մէկ քանի խմբա-
գիրներ, վարձատրելով ալ նրբակա-
նի կարօտ աշխատակիցները ու գոր-
ւէն թղթակիցները :

Այսպէսով լրագրութիւնը խաբար
համար առեւտուր չպիտի դառնայ,
ու իր ձայնը աւելի պատուաւոր, ա-
ւելի ազդեցիկ ու պատկոտիլ պիտի
ըլլայ՝ այնպէս ինչպէս որ պէտք է.
ու այսպէսով, վերջապէս, Հայր Ե-
րեմիանի օրաթերթին համակրելի ա-
ռաջարկը գործադրած պիտի ըլլանք՝
գէթ մասամբ մը՝ մենք, Եգիպտոսա-
յերս, որ լաւ բաներ ընելու սմեն
առաւելութիւններ ունինք, բայց թէ
չենք կրցած ընել, որովհետեւ համու-
ձայնութեան զգացումը կը պակսի մե-
զի :

Միացեալը այսինքն օրաթերթի
վերածելու խնդրը, Ալլան Գիլիւն :
Այսօրուան համար՝ Որ ունիցէ լսե-
լոյ՝ լուրիցէ...
Վառնա

համար թէ իրենք անխիստական եւ
այլ վնասակար կազմակերպութիւն-
ներու չեն վերաբերիր եւ հաւասարած
հպատակներ եղած են : »

Այս տեսակ պաշտօնական յայ-
տարարութիւն մը եթէ ստոյգ
եղած ըլլար, իսկապէս ջախջա-
խիչ էր Ամերիկա հաստատուող
մեր տասնեակ հաղարաւոր հայ-
րենակիցներուն, որոնք ամերիկե-
ան քաղաքացիներ արձանա-
գըրութեամբ իրենց ստացած ան-
ցագրերով չպիտի կարենային
հայրենիք վերադառնալ ու ի
հարկին պաշտպանուել նաեւ ա-
մերիկեան հպատակ նոր գործի-
ւորներն չպիտի յաջողէին, ո-
րովհետեւ իրենց անկարելի պիտի
ըլլար պահանջուած վկայագիրը
ձեռք բերել թուրք կամուռս
կառավարութենէն :

Այս խնդրով բնականապէս
շատ հետաքրքրուող հայ մը
գիւրդով Ամերիկայի կառավա-
րութեան ձեռնհաս պաշտօնէս-
թեան, ստացած է հետեւեալ ու-
րախառիթ պատասխանը :

«Անցադրեր կը աւուրն ամէն ա-
մերիկեան քաղաքացիներու, որոնք
օրինաւոր գիւրդով կ'ընեն, եւ ամէն
ամերիկեան քաղաքացիներ որոնք օտար
երկրի կ'երթան կը ստանան այս կա-
ռավարութեան պաշտպանութիւնը
հաւաստաբաւէս հոգ չէ թէ իրենց
ճանաչվային երթան թէ ուրիշ տեղ » :

Թիշեալ հետաքրքիր Հայը
անհիմն կը յայտարարէ Ամերիկե-
ան Արտաքին Գործոց Նախա-
րարութեան վերագրուած նա-
խընթաց պարբերութիւնը, ու կը
հարցնէ թէ յօդուածագիրը ո՛ւր
տեղ տեսած կամ լսած է այդ
տեսակ յայտարարութիւն մը :

Մենք ստանց ոպատելու այս հար-
ցումի պատասխանին եւ առանց պըր-
պտել պէտք տեսնելու թէ չինքնու-
կամ ստոյգ եղած ըլլայ այդ յայտա-
րարութիւնը, կը կարծենք գիտեալ
թէ Թրքո-ամերիկեան վերջին միջադէ-
պը ամերիկեան քաղաքացիներ երկրացիներ-
ուն այդ խնդրով վերջնականապէս
լուծած ըլլայ, եւ մօտ օրէն կարելի
լինի ստանալ աւելի որոշ եւ ուրա-
խալիթ պաշտօնական տեղեկու-
թիւններ այդ խնդրի առթիւ, ուստի
չհարգողութեան կարող են նոր հար-
ցումներ ուղղել ամերիկեան ձեռնհաս
պաշտօնէսութեան եւ նորագոյն ու գո-
հացուցիչ պատասխաններ ստանալ :

ԱՄԵՐԻԿԱՆԱԿ
ՀԱՅԵՐԸ

Վերջերս Ամերիկահայ թեր-
թի մը մէջ գրուած յօդուածի
մը մասը կը կաղմէր Ամերի-
կայի Արտաքին Գործոց Նախա-
րարութեան վերագրուած սա
յայտարարութիւնը :

«Ամեն անոնք որ ամերիկեան հպա-
տակ քաղաքացի եղած են իրենց
ճանաչվայրը վերադառնալու համար
անցադիր չեն կրնար ստանալ, եւ ե-
թէ առանց անցադիր երթան հոն չը-
պիտի պաշտպանուին, բացի իրենց
նախորդ հպատակ եղած երկրներէն
ամէն տեղ պիտի պաշտպանուին :
Եւ անոնք որ ամերիկեան քաղաքա-
ցի ըլլալ կուզեն, պարտաւոր են
իրենց պատկանած կառավարութենէն
վկայագիր ունենալ՝ հաստատուելու

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՐՈ-ԱՄԵՐԻԿԱՆ ՄԻՋԱԴԷՊԸ

Ամերիկայի Միացեալ Նահապագ
հաւատարմին Չմիւսնիոյ առջեւ հաս-
նելուն վրայ, Սուլթանը ստիպուե-
ցաւ անմիջապէս Դրան արտօնել որ
պատասխանէ թէ Ամերիկեան կառա-
վարութեան պահանջները ընդունելու
պատրաստ է եւ խնդրէ որ նաեւ
քաջուրն երթան : Սուլթանը կրկին
խանդակեցաւ իրեն իշխանութեան ըս-
պանացող թիւր ում մը արջեւ եւ
համակերպեցաւ իր երկրին մէջ հաս-
տատուած ամերիկեան վարժարաննե-
րուն տալ այն բացառիկ իրաւասու-

Թիւնները զորս կը վայելեն Թուրքիոյ մէջ էն աւելի մնալնորհեալ օտար ազգի մը հաստատութիւնները. նոյնպէս ամերիկեան քաղաքացիներուն թոյլատրել այն ամէն վայելքները որոնք թոյլատրուած են արդէն մեծ պետութեանց հպատակներուն: Հետեւաբար Միացեալ Նահանգաց քաղաքացիի անցագիր ունեցող ամերիկացեան հայերը ասկէ յետոյ պէտք է ազատ ըլլան հայրենիք այցելել ու վերադառնալ առանց գծաւարտութեանց, թէեւ տակաւին մանրամասնութիւններ ճշգրտած չեն եւ ամերիկեան պետականը կը ջանայ ճշգրիտ չիֆթ կէտերը: Բայց կը հաւատարմութիւն 1895-96 ին հայկական ջարդերու ատեն վերադառնալ ամերիկեան հպատակներու եւ հաստատութիւններու կրած վնասները ստուգելու համար եղած պահանջին գոհացում չէ խոստացուած. հետեւաբար կը կարծուի թէ թրքոստանիկեան միջնադէպը դեռ չէ փակուած եւ կրնայ կրկին սպառնական հանգամանք մը առնել: Միայն սա կէտը վստահութիւն կը ներշնչէ թէ՛ Ամերիկա չուղիով ամերիկեան ազգացիները Միացեալ Նահանգներու հաստատութիւններու վրայ աւելցնել կամ Միւսուելի թողութեան հետ պաշտպանութեան մէջ առաջնակարգ տեղը Ամերիկայի տալ, կ'աշխատի համազել Դուռը որ ներկայացած պահանջներուն գոհացում տալով «պէլան տէֆ» ընէ:

ՌՈՒՍԻԱ

Մայր. Արեւելի պատերազմով Ռուսիան համար սա փորձանաւոր օրերուն մէջ, Ձարուհին անգրաւիկ մանչ զուակ մը ծնած ըլլալով, կառավարութիւնը կը ջանայ իւր սուգի մէջ եղող ռուս յագովուրդին գէմքին վրայ արուեստական ժպիտներ փայլեցնել: Մինչ երկրին թարմ ուժերը ճարտական գնդակներուն անխնայ գոհ կերթան, ժողովուրդը ուրախանալու է երկրորդ Ձարը մանչ զուակ ունեցիկէն ու գրեթէ թէ ինչ քարի ծաղիկ մը պիտի ըլլայ Նորոսի:

Նր Ալեքսիս մեծ-զուքտ անունով գահաժառանգի իրաւունք է ստացեր եւ այլ: Ձարուհին այս ծննդաբերութիւնը կ'իյնէ բարեպաշտ կողմ մը ունի ժողովուրդին համար, այնչալ

միայն տաժանակիր աշխատութեան գաղափարով հազարաւոր խեղճերու ներում շնորհուիլը պիտի ըլլայ այդ առթիւ:

Իսկ պատերազմին տեսակետով որ էական է. Ռուսերու անյաջողութիւնը աւելի կը շեշտուի վերջին օրերու մէջ: Գայլի լուրին ձաթոցներէ գրաւուելէն անմիջապէս յետոյ Բորթ Արթուրի նաւատորմի գլխավոր չիլ ու վարչութեան նաւատորմին միանալու փորձերը անոր ջանքախուսութեան պատճառ եղան, այդ նաւերէ մէկ քանին վնասուած եւ դարձան, մէկ մասը մերձակայ օտար նաւահանգիստներ ապաստանեցաւ, ուրկէ չարտի ազատ ձգուին, ըստ միջազգային չէզոքութեան օրէնքին, մինչեւ որ պատերազմը լինայ, իսկ մնացեալ մասին ուր մնալը յայտնի չէ ապակաւին. եւ այսպէսով Բորթ Արթուրի նաւատորմը այսօր անգործութեան դատապարտուած է. որովհետեւ եւ զարձակները փախուստի նորագոյն անյաջող փորձ մը ընելէ վերջ, ալ համոզուեցան թէ փրկութեան միջոց չէլայ իցնեց եւ վարկեան առ փայլեան սպասուող Բորթ Արթուրի անկուսին հետ իրենք ալ դատապարտուած են կամ թշնամիին ձեռքը խնայ եւ կամ ծովին յատակը իջնել:

Գաղով վրայախօսութեան նաւատորմին. Գորէայի նեղուցին մէջ ծովակալ Գաւրիմուրայի հանդիպող երեք նաւերէն մին Ռիւտի ընկղմեցաւ եւ երկուքը ծանր վնասներ կրելով մազապուր պրծան վերեւ հալածող թշնամիին ճանկէն. բայց աւելի հետաքրքրականը Գաւրիմուրայի սուած սա տեղեկութիւնն է որ ռուսական նաւերու վրայախօսութեան վերադառնալու ճամբան գցած է, հետեւաբար այդ նաւահանգիստին դուրս գալու ուս նաւերը տեսակետով մը երկու կրակի մէջտեղ մնացած կը սեպուին, քանի որ մէկ կողմէ Գաւրիմուրայ անոնց նահանջքին անցըր դոցած կը սպասէ իր որդին միւս կողմէ ծովակալ Թոփոյի տորմիլը Բորթ Արթուրի կողմը իր գործերը աւարտած կարող է զօրեղ նաւորաւորներով մը Դեղին ծովէն ձաթանական ծովը անցնելով, բացը մնացած ռուսական

նաւերը հետապնդել: Ուրեմն ձաթանաք յաղթական տէրը կը մնան ծովին եւ Բորթ Արթուր ու վրայախօսութեան զրկուած իրենց ծովային պաշտպանութենէն:

Մանչուրիոյ մէջ ալ ռուս բանակին լաւագոյն ճակատագիրը մը չսպասեր. թէեւ լուրերը սակաւ հակասական, բայց անգլիական աղբիւրներէ առնուած տեղեկութիւնները ցոյց կուտան թէ զօրավար Գորբաթովին իր բանակը ի վնասի չը գտնուի ընդհանուր ճակատամարտ մը մղելու եւ կը շարունակէ դեռ իր նահանջի ծրագրին հետեւելը. բայց այս ծրագրին ալ տնայնորդութեան մատնուելու երեւոյթը կ'առնէ երբ հաւաք ընծայենք Տեյլի Միւրի հաղորդած այն լուրին թէ զօրավար Գորբովի Լիւս. Սանկի եւ Մուքաշինի միջեւ յառաջացած է Գաւրիմուրայի բանակին նահանջին գիծը կտրելու աստիճան. նաեւ նահանջի վրայ եղող Գորբովի իր բանակին վերջին մասը ռուս բանակէն կտրուած է ձաթոցներու կողմէ:

ԱՆԳԼԻԱ

Անգլիոյ խորհրդարանի նստաշրջանը վերջացաւ նախորդ երկուշաբթի օր փակման գահաճառին ընթերցումով: Այդ գահաճառը հետաքրքրող նորութիւն մը չէր պարգեւ եւ ոչ իսկ հայկական գործերու մասին Սուլթանի կառավարութեան դէմ օ եւ է ակնարկութիւն մը կ'ընէր, այլ կը բաւականանար միայն զգուշ եւ չափաւոր լեզուով մը ընդհանուր կացութեան վրայէն սահմանի պէս տահիլ անցնելով. կը հաստատէր թէ Մեծն Բրիտանիոյ եւ օտար պետութեանց յարաբերութիւնները գոհացուցիչ են. Յիշեց թագաւորին Բորէնիակ եւ Քիէլ այցելութիւնները, Յրանսայի, Իտալիոյ Սպանիոյ եւ Գերմանիոյ հետ նոր կնքուած դաշնագրութիւնները:

Թիպէթ զրկուած արշաւախումբին առանց մեծ դժուարութեան Լասա մտնելը եւ թիպէթական պատուիրակութեան մը հետ բանակցութեան ըսկալը թագաւորը չորհաւորելի յաջողութիւն մը կը նկատէ գահաճառին մէջ, եւ կը հաւատայ թէ բանակցութիւնները աջակցութեամբ

Ձինի Լասա գտնուող ներկայացուցիչին նպատակաւ արդիւնք մը պիտի յանգին յօդու վաճառականութեան եւ վերջ պիտի տան այն դժուարութեանց ու այն պաղ վերաբերութեանց որ շարունակական եղած էին Հնդկաստանի հիւսիսային սահմանին վրայ:

Ռուս-ձաթոս պատերազմին գաղով, գահաճառը յիշեց թէ թշնամութեանց սկսելու առաջին օրէն Էտուարտ Թագաւորը յայտարարութիւն մը հանած էր յորում կը ծանուցանէր Մեղլիոյ բացարձակ չէզոքութիւնը. բայց այդ պատերազմի առթիւ չէզոք պետութեանց վաճառականական պայմաններու մասին կարեւոր խնդիրներ ծագած են: Թագաւորը յոյս կը յայտնէ թէ ներկայացած այդ դժուարութիւնները պիտի կարգադրուին բարեկամօրէն եւ առանց ունէ վնասի Բրիտանիոյ վաճառականական մեծագոյն շահերուն: Գահաճառը աւելցուց թէ անգլիական կառավարութիւնը ամենազոք կերպով պիտի պաշտպանէ իւր հրատակներու իրաւունքները որոնք ծանցուած են միջազգային օրէնքով:

ԱԶԳԱՅԻՆ

Յաւաշիկայ Սեպտ. 3—5 ին Ուստրի մէջ պիտի գումարուի Ամերիկաբնակ Հայոց Ընդ. Պատգամ. Ժողովը: Հայաբնակ նահանգներու հոգաբարձութիւնները կը հրաւիրեն ժողովուրդը որ հաւաքուին կեդրոնական քաղաքներու մէջ պատգամաւորներու ընտրութեան քուէարկութիւններուն մասնակցելու:

—Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան կարգադիր յանձնաժողովը շրջաբերական նամակով մը կը ծանուցանէ թէ

ՆԵՐՍԵՍ ԱՅՏԱՐԱԿԵՑԻ

(Արտատպուած ԲԱԶՄԱՎԷՊ հանդէսէ)

Երբ Պարսիկները մօտեցան, որքան պէտք էր կրակեցին իւր թնդանօթները մէկը միւսի ետեւից: Այս անակնկալ թնդանօթներից շատ Պարսիկներ սպաննուեցին, որոնց թուում եւ նրանց զլխուոր հրամանատար Ամիրխան սարգարը: Մեծ կոտորածն ու հրամանատարի մահը ստիպեցին Պարսիկներին անկարգօրէն յետ փախչել:

1837 թուականի մարտ ամսի վերջում Պասկելի չըն եւ եւ զօրքի հետ Արարանի վրայով եկանք Երեւանի Պարսից սահմանը. զօրքը մտաւ Էջմիածին: Սկզբում ապահով էին համարում իրանց վանքի պարսպի մէջ, բայց յետոյ սկսան կասկածել, թէ թշնամին կարող է կտրել փանքի քանքանի ջուրը: Սակայն ապրիլ ամսի սկզբներում գծուար էր բերդակոծ մեծ թնդանօթները բերել գետերի եւ գետակների գարնանային ջրերի բարձրանալու պատճառով: Միւս կողմից ճանապարհների վատութեան պատճառով էլ թիֆլիսից թնդանօթներ չուտ հասցնել դժուար եղաւ: Երբ գերն սկսան, Պասկելի չը 4000 զօրք թողեց Արարանի Պարսից վրայ գրեզում, Արայի լեռան մօտ

գնեիրալ Ա. Ֆանասյի ի վաճառք կրասովակու հրամանաւարութեամբ. զօրքի մի հատուած մօտ 3000 ի չափ 4 թնդանօթով թողեց Էջմիածնի պարսպի մէջ պատուէր տալով վերոյիշեալ հրամանատարին յամենայն գէպս լսել իմ խորհուրդները: Իսկ ինքը մնացած զօրքով գնաց Արասուպատ բերդի վերայ, որ բաւական հեռաւորութիւն ունի Երեւանից: Պարսից թագաւորանոց Արքաւ Միրզան իմանալով Պասկելի չի հեռանալ Էջմիածնից եւ վաճառք սակաւաթիւ զօրք լինելը՝ յարմար միջոց համարելով եկաւ եւ 60 հազար զօրքով պաշարեց Էջմիածինը եւ Հոփսիսի վանքի բերդերից սկսաւ թնդանօթներով բերդակոծել Էջմիածնի վանքի եւ պարսպը: Նա ինձ լուր ուղարկեց, որ անհնաւոր լինեմք, ապաւնալով հակառակ գէպքում հիմնադրուած անել վանքը: Եւ պատասխան ուղարկեցի նորան, թէ Ռուսաց զօրքը սովոր չէ անհնաւոր լինելու. իսկ թէ ինքը քանդում է վանքը, թող քանդի. եւ ոսկուց կը կառուցանեմ: Բայց միեւնոյն ժամանակ աշտարակից Պետրոսի ձեռքով գեր ուղարկեցի Ղարաբուլաղ կրասովակ չիլ գնեիրալին եւ տեղեկացրի բանի էութեանը: Պետրոսը գիշերը գետի միջով փորսող տալով առաւօտեան հանում է այնտեղ: Գնալու ժամանակը Պարսիկ պահապանները դարձեալ նկատում են Պետրոսին եւ բռնում տանում տանում իրանց գլխաւորի, Սէլիմ բէկի մօտ, որ Աշտարակի մօտ Բէշի քէնտ կոչուած գիւղի կալուածատէրն էր

եւ միեւնոյն ժամանակ իմ մանրիմ բարեմամն եւ եւ նորա վերայ շատ վստահ էի: Երբ որ սա ճանաչում է Պետրոսին եւ վերջինս անկողնութեամբ յայտնում է, թէ ինձանից թուղթ է տանում Ղարաբուլաղ գնեիրալ կրասովակուն, հրամայում է իւր հաւատարիմ երեք մարդկանց նորան գաղսնի ճանապարհով անվտանգ հասցնել Ղարաբուլաղ եւ փութով վերադառնալ: Պատեւազմից յետոյ իմ առաջարկութեամբ Սէլիմ բէկը Պարսից չիլի աստիճան ստացաւ. կրասովակին ստանալով իմ գրութիւնից տեղեկութիւն Էջմիածնի պաշարման մասին իսկայն աճապարուած է հանել օդնութեան շուտափոյթ քայլով, նայն օրը հասնում է Աշտարակ եւ անգղուլութիւն է ունենում գիշերելու: Աշտարակում յայտնոյս Գասախ գետի շրջանակ զօրքին հանգիստ տալուց յետոյ գիշերը փորձանակելու գալը: Պարսիկները Օշականի բարձր լիւրի (կոնդի) վերայ թնդանօթներ են դնում, որ Ռուսները չկարողանան ջուր վեր առնել Գասախ գետից: Բայց ի այս գետից դաշտում այլ գետ չկայ, որտեղից Ռուսաց զօրքը եկել էր ամայի եւ անջրդի է: Թշնամու զօրքը Աշտարակի այգիների մէջ էլ լինում են եւ դարձեալ արգիւտութիւն են լինում Ռուս զօրքին գետից ջուր վեր առնելու:

(Շարունակելի)

